Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 425 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Սույն ծրագրի նպատակն է Դիլիջանի զարգացման շրջանակներում Դիլիջան համայնքում Հայ առաքելական եկեղեցու կառուցումը: Սույն ծրագրի իրականացման շրջանակներում բացի եկեղեցու կառուցման հետ կապված աշխատանքներից և ծառայություններից նախատեսվում է նաև համայնքի ներգրավմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում: Սույն ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է, որ Դիլիջան քաղաքը կունենա հոգևոր-մշակութային կարևորագույն ենթակառուցվածք, որտեղ կմատուցվեն համապատասխան կրոնական ծառայություններ, ինչպես նաև կկազմակերպվեն մշակութային բնույթի միջոցառումներ: Ակնկալվում է, որ եկեղեցու կառուցման միջոցով հնարավոր կլինի զգալիորեն բարելավել քաղաքային ենթակառուցվածքները՝ բնակիչներին հնարավորություն տալով բավարարել իրենց հոգևոր կարիքները: |
| 2. | Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործները | Սույն ծրագիրը հիմնականում ֆինանսավորվում է՝<br>Ռուբեն Վարդանյանի և Վերոնիկա Զոնաբենդի, ՌՎՎԶ հիմնադրամի<br>Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամի |

| | | |
|---|---|---|
| | | Զբոսաշրջության և Քաղաքաշինության բարեգործական հիմնադրամի (նախկին անվանումը՝ Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ բարեգործական հիմնադրամ)<br>ԱյԴիԱ բարեգործական հիմնադրամի<br>Մաքսիմ Աթայանցի<br>Այլ նվիրատուների և բարերարների<br>ֆիզիկական անձանց (ներառյալ՝ առանձին բարերարների), հայկական և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպությունների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների կողմից: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Սույն ծրագիրն իրականացվում է Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամի և ԱյԴիԱ բարեգործական հիմնադրամի կողմից:<br>Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամ՝<br>Գտնվելու վայր՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Դիլիջան 3903, Գետափնյա 7<br>Գործունեության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Դիլիջան 3903, Գետափնյա 7<br>Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական՝ 03Ա1031574<br>Գրանցման ամսաթիվ՝ 10.12.2015 թվական<br>Գրանցման համար՝ 222.160.881574<br>ՀՎՀՀ՝ 07618624<br>ԱյԴիԱ բարեգործական հիմնադրամ՝<br>Գտնվելու վայր՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հ. Հակոբյան 3<br>Իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0019, Բաղրամյան պողոտա 6<br>Գրանցման ամսաթիվ՝ 15.06.2020 թվական<br>Գրանցման համար՝ 222.160.1131998<br>ՀՎՀՀ՝ 00222509: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետություն Տավուշի մարզի Դիլիջան համայնքում: Բարեգործական ծրագրի բնագավառն է՝ եկեղեցաշինություն: |

<table>
<tr><td>6.</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Բարեգործական ծրագրի նպատակների իրականացման համար 2017-2025 թվականների ընթացքում ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը կազմում է՝ 3,718,935,000 դրամ:<br>Ծրագրի իրականացումը բաժանվել է 3 հիմնական փուլերի, այն է՝<br>1. Նախագծային, նախապատրաստական և հիմնային աշխատանքների իրականացում:<br>2. Ընդհանուր շինարարական աշխատանքների իրականացում և համայնքի ներգրավմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում:<br>3. Հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքներ, եկեղեցու բացման և օծման հանդիսավոր արարողության, համայնքի ներգրավմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում:</td></tr>
<tr><td>7.</td><td>Բարեգործությունն ստացողը</td><td>Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմ, Դիլիջան համայնք և բնակչություն, զբոսաշրջիկներ ու այցելուներ</td></tr>
<tr><td>8.</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>Ծրագիրն իրականացվելու է 2017 թվականից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</td></tr>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>Ծրագիրն իրականացվում է 3 փուլերով:<br><br>Ծրագրով նախատեսված ժամանակաշրջանում կատարվելու են հետևյալ միջոցառումները՝<br><br>1. Փուլ 1. Նախագծային, նախապատրաստական և հիմնային աշխատանքների իրականացում 01.03.2017 թվականից մինչև 30.12.2025 թվականը:
<table>
<tr><th>#</th><th>Միջոցառման նկարագրությունը</th><th>Ֆինանսական միջոցների ծավալը (հազ. դրամ)</th><th>Փաստացի կատարված ծախսերը (01.03.2017 թ.-30.06.2019 թ.)</th></tr>
<tr><td>1.</td><td>Էսքիզային նախագծի մշակում, Ինժեներական հետազոտություններ, Աշխատանքային նախագծի</td><td>200,000</td><td></td></tr>
</table></td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| | մշակում, փորձաքննությունների, կազմակերպում, հաստատում և կազմակերպչական այլ աշխատանքներ | | 78,412 |
| 3. | Պայմանագրերի կնքում կապալառուի և ծառայություններ մատուցող այլ անձանց հետ | 1,209,235 | 150,655 |
| 4. | Շինարարական նյութերի ձեռքբերում | 490,000 | 7,500 |
| 5. | Համայնքի ներգրավմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում | 14,700 | |
| 6. | Չկանխատեսված այլ ծախսեր | 25,000 | |
| | Ընդամենը | 1,938,935 | 236,567 |

2. Փուլ 2. Ընդհանուր շինարարական աշխատանքների իրականացում 01.07.2019 թվականից մինչև 31.12.2025 թվականը

| # | Միջոցառման նկարագրությունը | Ֆինանսական միջոցների ծավալը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1. | Պայմանագրերի կնքում կապալառուի և ծառայություններ մատուցող անձանց հետ | 970,000 |
| 2. | Աշխատավարձ, գործուղում | 10,000 |
| 3. | Շինարարական նյութերի ձեռքբերում ներքին շուկայից | 100,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 4. | Շինարարական նյութերի, ապրանքների և ծառայությունների ներմուծում | 100,000 |
| | | | 5. | Համայնքի ներգրավմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում | 147,000 |
| | | | 6. | Չկանխատեսված այլ ծախսեր | 55,000 |
| | | | | Ընդամենը | 1,382,000 |

3. Փուլ 3. Ներքին հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքներ 01.01.2021 թվականից մինչև 31.12.2025 թվականը

| # | Միջոցառման նկարագրությունը | Ֆինանսական միջոցների ծավալը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1. | Լանդշաֆտային նախագծի մշակման, հաստատման և կազմակերպչական աշխատանքներ | 20,000 |
| 2. | Աշխատավարձ, գործուղում | 10,000 |
| 3. | Պայմանագրերի կնքում կապալառուի և ծառայություններ մատուցող անձանց հետ | 40,000 |
| 4. | Շինարարական նյութերի ձեռքբերում | 120,000 |
| 5. | Շինարարական նյութերի, ապրանքների և ծառայությունների ներմուծում | 50,000 |
| 6. | Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ուսումնասիրություն, ձևավորում | 30,000 |

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td>
<table>
<tr><td>7.</td><td>Համայնքի ներգրավմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում</td><td>98,000</td></tr>
<tr><td>8.</td><td>Չկանխատեսված այլ ծախսեր</td><td>30,000</td></tr>
<tr><td></td><td>Ընդամենը</td><td>398,000</td></tr>
</table>
</td>
</tr>
<tr>
<td>10.</td>
<td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td>
<td>
<table>
<tr><td>#</td><td>Ծառայության անվանումը</td><td>Նախատեսված գումարը (հազ. դրամ)</td></tr>
<tr><td>1.</td><td>Կոմունալ ծախսեր</td><td>10,000</td></tr>
<tr><td>2.</td><td>Բենզինի, դիզելային վառելիքի ձեռքբերում</td><td>54,000</td></tr>
<tr><td>3.</td><td>Բեռների ներմուծում</td><td>150,000</td></tr>
<tr><td>4.</td><td>Պայմանագրեր կապալառուների, ծառայություններ մատուցող անձանց հետ</td><td>2,604,935</td></tr>
<tr><td>5.</td><td>Շինանյութի ձեռքբերում (տվյալ գործարքի շրջանակներում ակնկալվում է հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների վճարումից ազատում)</td><td>710,000</td></tr>
<tr><td>6.</td><td>Խորհրդատվություն</td><td>60,000</td></tr>
<tr><td>7.</td><td>Չկանխատեսված ծախսեր</td><td>110,000</td></tr>
<tr><td></td><td>Ընդամենը</td><td>3,698,935</td></tr>
</table>
</td>
</tr>
</table>

<table>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>

| # | Ծախսի անվանումը | Նախատեսված գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1. | Աշխատավարձ, գործուղում | 20,000 |
| 2. | Խորհրդատվության և աուդիտի ծախսեր | 30,000 |
| 3. | Գրասենյակի վարձակալություն, կոմունալ և այլ ծախսեր | 10,000 |
| | Ընդամենը | 60,000 |

</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>Սույն ծրագրի իրականացման նպատակով Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամը և ԱյԴիԱ բարեգործական հիմնադրամը համագործակցում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Տավուշի մարզպետարանի, Դիլիջանի քաղաքապետարանի, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Սույն ծրագրի իրականացման վերահսկողությունն իրականացնելու է Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամը և ԱյԴիԱ բարեգործական հիմնադրամը:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:<br>Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</td></tr>
</table>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ